# Գևորգ Էմին

## Դու մի նայիր

Դու մի՛ նայիր,
Որ ես այսպես խե՛ղճ եմ թվում
Եվ մոլորվա՛ծ,
Եվ վշտահա՛ր,
Կախա՛րդ եմ ես,
Համելնի հին ավանդության
Հրաշագործ սրնգահար...

Ո՛ւր ուզում ես հիմա ինձ տար,
Օտար երկի՛ր, քաղա՛ք օտար՝
Նյու-Եորք լինի,
Բէյրո՛ւթ,
Փարի՛զ.
Եւ...ո՛ւմ ուզում ես՝ հմայեմ,
Ո՛ւր ուզենամ՝ ինձ հետ տանեմ,
Կախարդանքով երգ ու բառիս:

Կուզե՞ս կանգնած Բրոդվէյում
Կամ Փարիզի, մեծ Բուլվարում
«Կոռ՛ւնկ» ասեմ
Եւ կամ մի պարզ «Նուբա՛ր-Նուբա՛ր» ,

Եվ այս Մարին, Մարիամ դառնա,
Այս Պիեռը՝ Պողո՛ս-Պետրո՛ս,
Եվ այս Ժակը՝ Հակոբ աղբա՛ր...

Կուզե՞ս երգեմ «Քելե-քելե» ,
«Ով քնած է--- ասեմ--- ելե՛ք,
Ով արթուն է՝ ելնի՝ տեղից...»
Եվ ինչքան հա՛յ կա տարագիր,
Գերված ձայնով պատարագիս,
Հայաստա՛ն գան իմ ետևից...

Եվ եթէ ես,
Կախա՛րդս վեռ,
Մեկ-մեկ այսպես խե՛ղճ եմ թվում,
Այսպես վշտո՛տ, այսպես երե՛ր,

Ներա՛ համար,
Համելնի հին սրնգահա՛ր,
Որ մանուկներն էին հնում
Քո ետևից գերված գնում,
Իմ ետևից՝ միայն ծերե՛ր
Միայն ծերե՛ր...